

**ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ  
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**

**Բաց Բաժնետիրական Ընկերություն**







**ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am**

**Հաշվետվություն թիվ 55, 22.10.2012թ.**


տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,192,401 հատ,	25,000 հատ	40,000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ	25 ԱՄՆ դոլար


“Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը”:

ստորագրող անձինք՝

<b>Զարուհի Մելքոնյան</b>	<b>Վարչության անդամի ժ/պ, Միջազգային գործառնությունների և թղթակցային հարաբերությունների վարչության պետ</b>		<b>22.10.12</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<b>Արա Ախոյան</b>	<b>Վարչության անդամի ժ/պ, Ռազմավարության և բիզնեսի զարգացման վարչության պետ</b>		<b>22.10.12</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<b>Սուրեն Կարապետյան</b>	<b>Վարչության անդամ, Տարածքային ստորաբաժանումների գործունեության կոորդինացման բաժնի պետ</b>		<b>22.10.12</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<b>Տիգրան Գալստյան</b>	<b>Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ</b>		<b>22.10.12</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<b>Նշան Գրիգորյան</b>	<b>Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ</b>		<b>22.10.12</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<b>Դավիթ Հարությունյան</b>	<b>Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ</b>		<b>22.10.12</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են՝

<b>Աշոտ Օսիպյան</b>	<b>Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն</b>		<b>22.10.12</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)



22 հոկտեմբերի 2012 թ.

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 28/01L որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ տնօրինություն

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ԳՂ, ք. Երևան, Պուլչկինի 19 հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ. փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

«22» հոկտեմբերի 2012թ.

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 28/01L

### ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 84-ի 1-ին մասի բ)-ից դ) կետերը, «Բանկերի և քանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21<sup>Ե</sup>-ի 1-ին մասի բ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի բ) ենթակետը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

### Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հրավիրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ (այսուհետ՝ ժողով) 2012 թվականի նոյեմբերի 27-ին՝ որոշումների ընդունման հեռակա քվեարկության (հարցման) եղանակով:
2. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 2012 թվականի հոկտեմբերի 22-ը:
3. Հաստատել ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 1-ի:
4. Ժողով հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:
5. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը՝ համաձայն Հավելված 2-ի:
6. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տեղեկացնել, որ սույն որոշման 5-րդ կետով հաստատված ցանկում ընդգրկված նյութերին կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք. Երևան, Պուլչկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում ([www.araratbank.am](http://www.araratbank.am)):
7. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկների ձևը՝ համաձայն Հավելված 3-ի:
8. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտել 2012 թվականի նոյեմբերի 27-ին:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:



Բարսեղ Բեգլարյան

Հավելված 1

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի

2012 թվականի հոկտեմբերի 22-ի N 28/01Լ որոշման

### **Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

2012 թվականի նոյեմբերի 27-ին կայանալիք ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի

1. 2012 թվականի հոկտեմբերի 08-ից 12-ն ընկած ժամանակահատվածում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից թողարկված լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները հաստատելու մասին:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրությունում փոփոխություն կատարելու մասին:

Հավելված 2

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի

2012 թվականի հոկտեմբերի 22-ի N 28/01/Լ որոշման

## **Ց Ա Ն Կ**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի

1. Լրացուցիչ թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման և դրանց դիմաց ամբողջությամբ վճարումներ կատարված լինելու վերաբերյալ տեղեկություններ:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության մեջ նախատեսվող փոփոխության վերաբերյալ տեղեկություններ:
3. Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը:

<b>ՔՎԵԱԹԵՐԹԻԿ</b>	
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Պուշկինի 19	
Քվեարկության դրված հարցը	քվեարկության տարբերակները
	կողմ <input type="checkbox"/> դեմ <input type="checkbox"/> ձեռնպահ <input type="checkbox"/>
բաժնետիրոջ /նրա ներկայացուցչի/ բաժնետոմսերի (ձայների) քանակը	բաժնետիրոջ /նրա ներկայացուցչի/ ազգանունը և անունը
<input type="text"/>	<input type="text"/>
ստորագրությունը	
<p>Ծանոթություն. Հարգելի բաժնետեր, Ձեր ընտրության տարբերակի վանդակում նշագրեք «X», իսկ մյուս վանդակները թողեք դատարկ: Եթե բոլոր վանդակները թողնվեն դատարկ կամ «X» նշանը լրացվի մեկից ավել վանդակներում, ապա քվեարկությունը այս քվեաթերթիկով կհամարվի անվավեր: Հիշեցվում է նաև, որ քվեաթերթիկը պետք ստորագրվի քվեարկողի կողմից:</p>	

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ  
ընդհանուր ժողովի մասին

## Հարգելի բաժնետեր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ ք.Երևան, Պուշկինի 19) 2012 թվականի նոյեմբերի 27-ին հրավիրում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ որոշումների ընդունման հեռակա քվեարկության (հարցման) եղանակով:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2012 թվականի հոկտեմբերի 22-ի դրությամբ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգը կցվում է սույն ծանուցմանը:

Ժողովում քննարկվող հարցերին վերաբերող նյութերին Դուք կարող եք ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք. Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում ([www.araratbank.am](http://www.araratbank.am))՝ սկսած 2012 թվականի հոկտեմբերի 22-ից մինչև 2012 թվականի նոյեմբերի 27-ը ներառյալ:

Միաժամանակ սույն ծանուցմանը կից Ձեզ ենք ներկայացնում ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը:

Հարգանքով՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչության նախագահ

Աշոտ Օսիպյան

